

## Ծածկագիր

12-2-ՔՅ6-Մ3-22

## Պաշտոնի Անվանում

Ավագ մասնագետ

## Պաշտոնի Ամբողջական Անվանում

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ | Կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժանմունք | Ավագ մասնագետ

## Անմիջական Ղեկավարի Պաշտոն (Օգտագործվում է վերապատրաստման հատվածում)

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ | Կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժանմունք | Բաժանմունքի պետ

## Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժանմունքի պետին:

## Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժանմունքի ավագ մասնագետներից մեկը:

## Աշխատավայր

Հայաստան, ք. Էջմիածին, Չոբանքարա

## Աշխատանքի բնույթը (գործառույթներ)

- վարում է աշխատողների աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանը,
- կազմում և վարում է պաշտոնի նշանակված կրտսեր խմբի քրեակատարողական ծառայողների կամ աշխատանքի ընդունված աշխատողների վերաբերյալ անձնական գործերը.
- մասնակցում է ծառայությունից ազատվող և կենսաթոշակի անցնող կրտսեր խմբի քրեակատարողական ծառայողների համապատասխան փաստաթղթերի պատրաստման աշխատանքներին.
- իրականացնում է ծառայողների և քաղաքացիական աշխատանք կատարող աշխատողների անձնական գործերի հաշվառումը.
- կազմակերպում է Հիմնարկի ծառայողների երդման արարողության նախապատրաստական աշխատանքները.
- մասնակցում է քրեակատարողական ծառայողների թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներին.
- իրականացնում է կրտսեր խմբի քրեակատարողական ծառայողների ծառայողական վկայականների պատրաստման, հատկացման, հաշվառման և դրանց ոչնչացման աշխատանքները,

- վարում է քրեակատարողական ծառայողների և քաղաքացիական աշխատանք կատարողների անձնական քարտերի քարտադարանը.
- վարում է Քրեակատարողական ծառայության պետի հրամանների, Հիմնարկի աշխատակիցների անաշխատունակության թերթիկների և աշխատանքային պայմանագրերի հաշվառման մատյանները.
- իրականացնում է Հիմնարկում սահմանային տարիքն ընթացիկ տարում լրացող քրեակատարողական ծառայողների հաշվառումը.
- մասնակցում է քրեակատարողական ծառայողներին վերապատրաստման կամ հատուկ ուսուցման գործուղելու աշխատանքներին.
- մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման, կատարողականի գնահատման, կիսամյակային և տարեկան հաշվետվությունների կազմման աշխատանքներին.
- մասնակցում է Հիմնարկի աշխատողներին խրախուսանքի ներկայացնելու, կարգապահական տույժ կիրառելու հետ կապված աշխատանքներին.
- իրականացնում է Քրեակատարողական ծառայությունից ազատված կրտսեր խմբի ծառայողների հաշվառման և հատուկ զինվորական հաշվառման ենթակա պահեստագորայինների ամրագրման աշխատանքները

#### Իրավունքները

- մասնակցել իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ համատեղ քննարկումներին.
- համապատասխան ստորաբաժանումներից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, հիմնավորումներ, պարզաբանումներ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն.
- հրամանների նախագծեր նախապատրաստելու համար պահանջել համապատասխան դիմումներ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ հիմնավորող փաստաթղթեր.
- Քրեակատարողական ծառայությունից ազատված և կենսաթոշակի անցած նախկին աշխատակիցներին բժշկական հետազոտման ուղարկելու նպատակով պահանջել ներկայացնել համապատասխան բժշկական ախտորոշման փաստաթղթեր.

#### Պարտականությունները

- քննարկել և ընթացք տալ աշխատակիցների կողմից ստացված առաջարկություններին, դիմումներին և բողոքներին ու արդյունքների վերաբերյալ կազմել տեղեկանք.
- պատրաստել աշխատակիցների աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկանքներ.
- հսկողություն իրականացնել քրեակատարողական ծառայողներին կոչումներ շնորհելու ժամկետների պահպանման նկատմամբ և ստուգել օրենսդրությամբ սահմանված կարգի համապատասխանությունը.
- կազմել գրությունների և հրամանների նախագծեր՝ կոչումներ շնորհելու, փոխադրումների, զբաղեցրած պաշտոնից և ծառայությունից ազատման, խրախուսանքների և կարգապահական տույժերի ենթարկելու վերաբերյալ և ներկայացնել խմբի ղեկավարին.

5. կազմել ամենամյա արձակուրդների ժամանակացույցերը և իրականացնել դրանց ժամանակին ձևակերպման համար անհրաժեշտ աշխատանքները.
6. վարել համապատասխան մատյանները.
7. մուտքագրել Հիմնարկի աշխատողների տվյալները <https://erepo.gov.am/operator> (Առողջապահական փաթեթի հասանելիության էլեկտրոնային շտեմարան) համակարգում.
8. մուտքագրել Հիմնարկի աշխատողների տվյալները <https://hartak.cso.gov.am> համակարգում.
9. հաշվարկել կրտսեր խմբի քրեակատարողական ծառայողների աշխատանքային ստաժը՝ կազմելով համապատասխան տեղեկանք և կցել անձնական գործին:

### [Մասնագիտական գիտելիքները](#)

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

### [Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը](#)

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կադրերի և մասնագիտական կողմնորոշման բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ

### [Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը](#)

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

### [Որոշումներ կայացնելու լիազորությունները](#)

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

### [Գործունեության ազդեցությունը](#)

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն:

### [Շփումները և ներկայացուցչությունը](#)

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

### [Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը](#)

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

### [Անհրաժեշտ կոմպետենցիաներ](#)

- **ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ**
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարելավություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  
- **ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ**
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

[Անվանագանկում Պաշտոնի Հաստատման Ամսաթիվ/Պաշտոնի ստեղծման ամսաթիվ](#)

2025-12-09